

ՄԱԿԱՐ ԳՈՐԾԻՒ

Մ Ա Ր Գ Ը

— Հ Յ Թ Ւ —

I

Հոգեկան մույլ, տիսուր ժամերին, երբ յիշողութիւնս վերականգնում է անցեալի խոհեր և դրանից սառչում, կանգ առնում արինս, երբ միտքս՝ նման աշնան արեգի լուսաւորում է ներկայի դաժան քաօսը կարմիր և ահեղօրէն ճախրում մի կէտում, անկարող դէպ վեր թռչիլ, քարծրանալ, անկարող յառաջ, յառաջ սլանալ, — ահա իմ հոգու այդ ահեղ ժամին երեւակայութեանս ամբողջ թափով ես իմ առաջն եմ պատկերացնում մարդու վեհ, վսեմ պատկերը զոռոց:

Մարդ! իսկ և իսկ կարծես արեգի չըքնաղ ցոլցն է թափանցում հոգու խորքը և նրա վառ յուսոյ տակ, տիեզերքի անսահմանութեան մէջ, ընթանում է նա յամբաքայլ, դանդաղ, ողբերգօրէն գեղեցիկ. Մարդ! յառաջ և քարծր...

Եւ ես տեսնում եմ նրա ճակատը՝ հըպարտ, գեղեցիկ, և մտախոհ, խորունկ, համարձակ աշերն, ուր վառվում են ճառապայթները անվեհեր մտքի, այն վեհ մտքի, որ կարող եղաւ հսկայ տիեզերքի չքնաղ ներդաշնակութիւնը իւրացնելու և ըմբռնելու այն ահեղ ոյժը, որ յուսահասութեան տիսուր ժամերին աստուածներ է ստեղծում, խիզախ ըռպէին — նրանց կործանում:

Մոլորուած՝ տիեզերքի անապատներում, միայնակ՝ հողի շերտուի վրա, — յօշուում է նա իր միտքը, տանջուում այս հարցով, «ինչո՞ւ է մարդ ապրում»: Բայց և նա քաջարար յառաջ է շարժում, յառաջ և քարծր՝ երկրի և երկնի ըոլոր գաղտնիքը ըմբռնելու յաղթական ուղիով:

Յառաջ է ընթանում նա՝ արինով ու ողակելով իր դուարին, մենաւոր ու հպարտ

ուղին և իր այդ արեան ջերմ կաթիլներից հիւսում է չքնաղ բանաստեղծութեան անթառամ փունջեր, նա իր զառնազին, վշտառատ հոգու յուսահատ նիշից կազմում է չքնաղ երածշտութիւն, նա իր ձեռք բերած փորձառութիւնից առաջ է բերում հսկայ զիտութիւնն և ամէն քայլում գեղեցկացնելով մեր մույլ կեանքը, ինչպէս վառ արեւ, իր ճաճանչներն է ուղղում դէպ երկիր: Նա ընթանում է յառաջ և բարձր. ուղեցոյց աստղ մեր երկրի համար!...

Զիահաւորուած ոյժերով մտքի, — երբեմ նման կայծակ որոտի, երբեմ՝ սառն ու հանգիստ ինչպէս սուր սուսեր, — ընթանում է նա ազատ ու հպարտ, ընթանում յառաջ մարդ արարածը մարդոց առաջից և կեանցից բարձր, միայնակ՝ իր գործած սխալմունքների հանդէպ...: Եւ այդ ըոլորը նրա հպարտ կուրծքը ճնշում, նեղում են միշտ աշեղորէն ու վիրաւորում սիրտը, յօշուում ուղեղն և առաջ բերում նրա մէջ ուղգին զգացմունք ամօթի — այդ ըոլորի համար — ու այդ ըոլորը ոչնչացնելու, խորտակելու պատրաստում:

Յառաջ է զնում... Եւ նրա կրծքում եռում են բնազդները, զազրելի կերպով վայում է ձայնը ինքնասիրութեան, ինչպէս անամօթ մի մուրացիկ, որ պահանջում է ողորմութիւն. նրա սիրտն ու հոգին կծկում, կաշկանդում են կուռ կապանցներից, ամեն տեսակի զգացմունքներ իշխող են ուղում դառնալ նրանում, ամեն ինչ ճգնում է տիրել նրա հոգուն:

Եւ ինչպէս մոլորակներն են շրջապատում արեգակը, այնպէս էլ Մարդուն մի հոծ քազմութեամբ շրջապատում են նրա վեհ Մտքի, արարչագործ Մտքի ստեղծագործութիւնները — նրա միշտ անյագ Աէրը, քիչ հեռուն, նրա ետեւում քաշ է գալիս ընկերակցութիւնը, նրան դիմաւուրում է նւազած Յոյսը, ահա և զայրութով ու համբերութեամբ լցուած Ատելութիւնը, իսկ Մահը մույլ աշքերով նայում է նրա թշնամական գէմքին ու սպասում նրան իր հանգիստ զրկում ընդունելու...:

Հոգութեան ցնցոտիներով, նախապաշար-

մունքների թոյնով համակռած, այդ բուլորը թշնամարար հետեւում են Մարգին, — երբէց չընամելով նրա թոփշըին, ինչպէս ազուաը չէ կարող հասնել դէպ էթեր ճախրող արծիկ ետեւից, — և այդ Մարգի հետ նրանք առաջնութեան համար են մրցում ու շատ սակաւ են նրանց միասին մի կարող և ստեղծագործ բոցով ի մի ժուլում:

Եւ հէց այդտեղ է Մարգու մշտական կոյր ուղեկիցը, համր ու մոայլ խորհրդատր Մահը, որ միշտ պատրաստ է համրոքել նրան և նրա սիրոը, որ կեանքի ծարաւով է բոցավառում:

Նա իր անմահ շքախմբում ճանաչում է ամենքին. այդ բոլորից բաց նա ճանաշում է և մէկին — Անմտութիւնը...

Թեւաւոր, հզօր, ինչպէս մըրկի կամ զոռ փոթորիկ, Անմտութիւնը հետեւում է Մարգուն և թեւերի տակ առնում Մարգին ու ջանում, ճգնում իր վայրի պարին են թարկել նրան...

Իր ողբալի շքախմբում նա ճանաչում է իւրաքանչիւրին, — այլանդակ են, անկատար, շատ են թոյլ նրա հոգեկան ըստեղծագործութեանց արդինք պարածները...

Եւ միայն Միտքը, մենաւոր Մարգու անրաժման ընկերը, միայն այդ Միտքն է, այդ Մարգի բոցն է, որ լուսավառում է նրա ընթացած փշոտ ուզիկ խոչընդունեց, առեղծուածները այս ահեղ կեանքի, բնութեան գաղտնիցների թանձր խաւարը, մարդկային մորի մոայլ բաօսը:

Մարգու անկաշկանդ, ազատ ընկերը — Միտքը — աշալորջ մի սուր հայեացըով դիտում է և անինայ լուսաւորում ամեն ինչ.

— Սիրոյ ստոր ու խարդախ թակարդները, նրա ցանկութիւնը՝ սիրածին տիրելու, նրան ստորացնելու և ստորանալու ժառումը և զցայականութեան խայտառակ պատկերը.

— Յոյսի երկշոր անդորրութիւնը և Ստութիւնը, նրա պնաւած, զարդարուն բոյր Ստութիւնը, որ պատրաստ է միշտ

և ամենքին հանգստացնել, խարել գեղեցիկ, սիրուն խօսքերով:

— Միտքը անինայ լուսաւորում է ինչ կերակցութեան խոհուն զգուշութիւնը, ինստա և զատարկ հետաքրքրութիւնը, նախանձի ու բամբասանքի սե թծերը:

— Միտքը տեսնում է սե ատելութեան ոյժը սոսկալի և նա լաւ գիտէ, որ եթէ մինի նա շղթայազերծ, այն ժամանակ նա կը խորտակէ այս երկրի վրա, ամեն ինչ կը փշէց, նոյն իսկ չի խնայիլ և այն թիշ մարդկանց, որոնց հետամուռ են ճշշմարտութեան:

Միտքը անսասան հաւատով լցուած՝ լուսաւորում է նաեւ ծարաւը — չար ու խայտառակ և անսահման իշխանութեան, որ ջանում է ստրկացնելու ամեն մի ձրգուում, անկաշկանդ Միտքը լուսաւորում է և նրա սուր մազիլները, և անզօրութիւնը նրա մանր էծի և կուրութիւնը յիմար ու պղտոր նրա աչքերի:

Միտքը համարձակ կուի է բռնւում նաեւ Մահուան հետ: Մարգի համար անտանելի, զղուելի է Մահուան այդ յիմար, չար ու անպատզ սե ունայն ոյժը, զըրանց ատելի են այն ազատ, անմահ, վեհ Մարգի համար, որ կենդանի Մարգը յառաջ բերեց, որ շատ աստուածներ ստեղծեց, որ տուց աշխարհին սիստեմները փիլիսոփայութեան, գիտութեան — բանալիները տիեզերական առեղծուածների:

Մարգի համար Մահը նման է նրան, որ ցնցուիների մէջ դռնէ դուռ ընկած՝ իր կեղտոտ պարկի մէջ է հաւաքում աղբանոցից կեղտոտ ու փթած անպէտց շատ բաներ, բայց երրեմն նա ստոր գողի պէս կոփում է նաեւ առողջն ու պիտանին:

Աղտոտութեան զարշ հոտով մնուած, զարհուրանցների ծածկոցում զգձուած, նա Մարգու առջեւ կանգնած է որպէս համբ, անվրդով, գաֆան ու մոայլ ահեղ առեղծուած, իսկ վառ ու պայծառ Միտքն ստեղծագործ՝ լցուած անմիտ յանդզնութեամբ, զարդարութեամբ, անմահութեան երգն հնչելով՝ ուսումնասիրում է սին, զաման Մահուան...

Այսպէս է ընթանում ըմբռատ ու զսեմ արարած Մարդը գոյութեան թանձր, մոայլ խաւարի փշերի միջով յառաջ և բարձր, յառաջ և բարձր...

II

Ահա նա յոցնած՝ օրօրում է և տըն-քում. վհատուած սիրար հաւատ է որո-նում, հաւատ, ջերմ հաւատ և բարձր, ուժին աղերսում Սիրոյ բնըոյշ փաղաք-շանք:

Եւ ի ճնէ թոյլ երեց թռչուն - Վհա-տաթիւնը, Յուսահատութիւնը և Վիշտը, այդ երեց սեւ ու այլանդակ թռչունները չարագուշակ կռնչում են նրա հոգու բար-ձունքում այս խիստ դաժան երգը հնչե-լով, - որ Մարդ մի չնչին, մեղկ արա-րած է, որ կաշկանդուած է նրա զիտակ-ցութիւնը, անզօր է Միտքը, ծաղրելի՝ սուրբ հպարտութիւնը և որ թէկուզ նա ինչ էլ անէ, վերջ ի վերջոյ մեռնելու է:

Դողում է նրա յօշուաւած սիրար այդ սուտ ու չար երգի ճայնից և վարանում-ների սուրբ ասեղները ծակում են նրա բորբոքուած ուղեղը. նրա աչերում փայ-լատակում է վիշտաւր սրտի արցունքը ցայտում...

Եւ եթէ նրանում հպարտութեան կրա-կոտ կայծը չը բռնկուի, - Մահուան վա-խը իշխանաբար կը քչի նրան ծաւերի խաւար, սեւ մոայլ խուցը. Սէրը, յաղ-թական ժպիտը դէմքին, կ'ընդունէ նրան իր գրկում բազզաւորութեան բարձրա-ձայն խոստմանց տարափի տակ ծածկելով տիտուր անզօրութիւնը ազատ դառնալու և բնազրական անյագ բռնակալութիւնը...

Ստութեան հետ դաշինք կոած երկշու թոյլը երգում է Մարդաւան հանգստութեան քաղցրութիւնը, երգում է հաշտութեան խաղաղ երջանկութիւնը, սիրուն խօսքերով օրոր է կարդում քնէած հոգուն, գրելով նրան քաղցր Ծուլութեան խորը տղմի մէջ ու դէպ Զանձրոյթի - Ծուլութեան քրոջ - սպանիչ գիրկու:

Եւ չնորհիւ այդ բորբոքուած, անսա-

նական զգացմունքի, նա իր ուղեղն ու սիրար վարակում է մահարեր թոյնով ստոր ստութեան, որ ուսուցանում է պարզօրէն, ազատ, թէ Մարդ չունի այլ ուղի կեան-քի, բան այն ճամբան, որ տանում է կեն-դանական հանգիստ պարզեւող ինցնարա-ւականութեան զգացմունքը...

Բայց Միտքը հպարտ է և Մարդը նրա համար՝ Թանկի: Միտքը չար կուի է բռնը-ւում ստութեան հետ և կուի դաշտը - Մարդու Սիրտն է:

Թշնամու նման Միտքն հետեւում է Մարդուն ամեն տեղ և որպէս մի որդ՝ անիմնայ կրծում, սրում ուղեղը, որպէս երաշո՛ ցամաքեցնում կուրծքը, որպէս դահճօ՛ տանջում Մարդուն. նրա իխոցը անխողնօրէն ճմլում է վշտի սառն զգաց-մունքը, որ յառաջացել է կեանքի խիստ դաժան ճշմարտութիւնից. որը թէեւ դան-դազ է զարգանում, բայց տեսանելի է մոլորութիւնների աղջամուղջի միջից որ-պէս մի ծաղրելի հրաշէկ, բոցավառ, Մարդից ծնունդ առած:

Բայց եթէ Մարդը անրութելիօրէն թու-նաւորուած է Ստութեան թոյնով և արդէն հաստատ հաւատո՛ւմ է նա, որ երկրիս վրա բաղդաւորութիւն գոյութիւն չունի, բաց ի ստամոքսի և հոգեկան կուշտ զրու-թիւնից, հանգստութիւնի և այլ կենսական ամենամանը յարմարութիւնից, այն ժա-մանակ նա, Միտքը անկաշկանդ, ցնծա-ցող զգացմունքին ստրկանալով, տիրա-գին դէպ վար է իջեցնում իր թեւերն ա-զատ և նիրհում, նիրհում ստրուկ, նա-հաստակ թողնելով մարդուն իշխանութեա-նը սրտի, զգացմունքի:

Եւ տարածւող ամպի նման՝ Ստորու-թիւնը կեղասու - Զանձրոյթի ցոյլը - ա-մեն կողմից սողում, գալարւում է շուրջը Մարդու, պատեհով մաջող գարշ փոշիով և նրա ուղին և սիրան ու աշքերն:

Եւ Մարդը մոլորուած՝ դառնում է մի թոյլ, անզօր արարած, դառնում կենդա-նի, առանց հպարտութեան, առանց վեհ Մարդի ...

Բայց երբ նրանում զայրոյթը ցասկոտ

բողբոքւում, կայծեր է առաջ թերում, նա վառում է իր միտքն ու հոգին և նուրից զնում հեռու, շատ հեռու, միայնակ՝ իր սխալմունքների տատասկների միջով, միայնակ՝ իր վարանումների այրով, շեկացած կայծերի միջով, միայնակ՝ հին աւերակների բեկորների միջով...

Վեհ, հպարտ ու ազատ, նա արիարար նայում է ճշմարտութեան պայծառ աչքերին և զիմում դեպ իր վարանումները.

«Դուք սուտ էք խօսում, ասելով որ ես անզօր եմ, թոյլ եմ, որ կաշկանդուած է իմ միտքն ու հոգին. նա զարգանում է, ես այդ լաւ գիտեմ, տեսնում եմ, զգում, — նա ինձնում աճում, ծաւալ է ընդունում. Մարի զարգացման հասնում եմ ես տանջանքի ոյժով և գիտեմ, որ եթէ նա չըզարգանար, ես առաջուանից աւելի չէի առնջուի, խորովուի:

Բայց ես ամեն քայլափիսում միշտ աւելին եմ ցանկանում, միշտ աւելին եմ ես զգում, միշտ աւելի խորը տեսնում և իմ ցանկութեանց այդ արագ աճութեան — իմ Մարի կարող զարգացութեան է: Այժմ նա ինձնում կայծի է նմանում. և չ՞ որ կայծը հրեհի մայրն է. ես ապագայում մի հրդեհ եմ զանալու տիեզերից թանձր խաւարի մէջ: Եւ ես կոչւած եմ ամրող աշխարհը լուսաւորելու, ցըլու խաւարը նրա թագցրած զաղունիքներից, գտնելու ներդաշնակութիւնը իմ և աշխարհի միջև, ինք իմ մէջ ներդաշն ակութիւն ստեղծելու և լուսաւորելու կեանքի ամրող մռայլ քառոր այս տանջալից երկրի վրա, որ պատած է դժբաղութեան, վշտի, դառնութեան, չարութեան կեղեւով. ես կոչւած եմ այդ բոլորը արմատախիլ անելու և անցեալի անդառնալի գիրեզմանին յանձնելու:

Ես կոչւած եմ քակելու ամեն տեսակ մոլորութեանց, սխալմունքների կուռ հանգոյցները, որոնք կաշկանդում, կապում են վախկոս մարդկերանց սրտեր, դարձնում նրանց կենդանիների արիւնոուշտ, զզուելի մի հաւաքածու, որ յոշոտում, պատառտում են միմիանց:

— Ինձ Միտք է տրուած նրա համար, որ շուռ տամ, խորտակեմ, կոսկոտեմ հինքը, փթածը, ամեն բռնութիւն, նողկալի չարիք, — և ես կը ստեղծեմ նորը, հրաշալին, հիմք ունենալով վեհ ազատութեան, բարու գեղեցկի և մարդկային իրաւունքը յարգելու՝ Մարի կոած՝ շնչը անսասան:

— Ես պէտք է յաղթեմ մարդկային թշւառ, ամօթարեր ցանկութեանց անհաշտ թշնամուն. ես կամենում եմ, որ մարդկերանցից իրացանչիւրը լինի Մարդ!

— Ամօթալի, անմիտ է և անտանելի պյս մեր կեանքը, ուր ոմանց զրկալից, ստրկական աշխատանքը, ապարդիւն է գործադրում իրենց համար և ուրիշներն են դրանց թափած արին – բրատինցով անխնդորէն յագենում և՛ հացով և՛ հոգեկան շնորհով:

— Անէծք այն բոլոր նախապաշարումունքներին, կարծիքներին կանխակալ, սովորութիւններին վատթար, որ սստայնի պէս կպչում, զալարում՝ պատում են մարդկանց ուղեղն ու կեանքը: Նրանց չեն թողնում ապրիլ, վայելել, նրանց բռնութիւն են գործադրում մարդկանց վրա. — ես նրանց կը խորսուեմ!

— Իմ զննքը – Միտքն է, իսկ Մարի ազատութեան, նրա անմահութեան և ըստեղծագործութեան յաւիտենական զարգացման մասին ունեցածն անսասան հաւատն — իմ կարող ոյժի անսպառ աղբւրւն է վճիր:

Միտքը ինձ համար յաւիտենական և ճշմարիտ միակ ուղեցոյցն է այս մեր մըռուայլ, դաժան կեանցում. նա մի կրակ է կեանցի խայտառակ մոլորութիւնների աղջամուղի մէջ. ես տեսնում եմ, որ նա աւելի ու աւելի պայծառ է վառում, աւելի խորն է նա լուսաւորում արմատները զաղունիքների և ես իմ անմահական նաւազայթներով զինուած՝ զնում եմ նրանց տեսելից — միշտ բարձր և յառաջ...

— Մարի համար գոյութիւն չունին անխորտակելի կուռ ամրութիւններ: Ամեն ինչ է նա շնուռ, ստեղծում. այդ հան-

գամանքը տալիս է նրան սուրբ իրաւունք անկապտելի՝ խորուակելու ինչ որ արգելը է հանդիսանում նրա զարգացման:

— Ես անվրդով զիտակցում եմ, որ նախապաշարունքները՝ հին ճշմարտութիւնների բեկորներն են, իսկ մոլորութիւնների ամպերը, որ այժմ պտոյտ են գործում կեանցի վրա, — այդ բոլորը առաջ են եկած մոլորից այն հին ճշմարտութեանց, որ անինայ այրուեցին երեքն նրանց ստեղծող Մտքի վառ բոցերից:

— Ես լաւ եմ զգում, որ յաղթոր են ոչ թէ նրանց, որ յաղթութեան պառզներն են վայելում, այլ որ նրանց, ովքեր անվեհեր ընկնում են կուռում:

— Կեանցի իմաստը ես տեսնում եմ ստեղծագործութեան վեհ ոյժի մէջ:

— Գնում եմ յառաջ, որպէսզի վառուեմ աւելի վառ ու պայծառ, և հրաշէկ ճաճանչ սփում կեանցի խաւարի վրա: Եւ իմ անկումը ինձ համար — իմ վարձատրութիւնը կը լինի:

— Ուրիշ վարձատրութիւն պէտք չէ ինձ. ես տեսնում եմ — իշխանութիւնը՝ ամօթարեր է ու ձանձրալի, հարստութիւնը՝ ծանր և յիմար, փառը՝ նախապաշարմունց, որ առաջ է եկել մարզկանց՝ իրենց զնաշատելու անկարողութիւնից և նրանց՝ ստրկօրէն ստորանալու ստվորութիւնից:

— Վարանումներ! Դուք — Մտքի կայծերն էք միայն և ուրիշ ոչինչ: Միտքն ինքը իրեն տանջելով՝ ծնում է ձեզ իր ոյժի աւելորդութիւնից և կերպարում ձեզ հէնց իր ոյժով:

— Կը զայ ժամանակ, որ իմ կրծքում մի վեհ, հսկայ ստեղծագործող բոցով ի մի կը ձուլուի զգացմունցներիս ալ խանդը անմահ Մտքին հետ և այդ բոցով ես կը վառեմ, կը լուսաւորեմ կոյսր հոգիներում բռն դրած բոլոր մթութիւնները, դաժանութիւններն ու չարիքները. ես կը նմանիմ այն աստուածներին, որ Միտք են ստեղծել և ստեղծում են!!!

Աչա նորից վեհ ու ազատ, բարձր բըռնած իր հպարտ զլուխը, նա ընթանում է

զանգազ, բայց անյոդդորդդ բայլերով, նախապաշարմունցները ոտնատակ տալով, միայնակ՝ մուայլ մոլորութիւնների թանձրու իւ խաւար մշուշ միջով. նրա ետեւում կանքնած է անցեալի փոշին ծանր ամպերի, նրա առջեւում — առեղծուածների մի հսկայ, մեծ կոյս, որ անվրդով սպասում է նրան:

Նրանց անհամար են, որպէս աստղերը երկնի խորցերում, և — անվերջ է Մարդու ու ուղին:

Այսպէս ընթանում է խոռվայոյզ Մարդու — յառաջ և բարձր, միշտ յառաջ և բարձր!...

ազատ թարգմ. Վ. Տ. - ԱՅԲ.

ՄԻԱՅՆԱՌԻ Ի ԻՆ

Յ. Ա. Խ

Ես երեկուն մը տեսայ գէու՝ արեւմուտ Երթան օրուան սատղին՝ ամգով մը հրանուա.

Ըսի թըռչոյն, որուն երգին եւ և էլ կը խանձրէի զաշակին՝ մէջ ու զովսաի մէջ.

«Ինչո՞ւ, կ'ուսե՞ս ինձի, այսինք զո՞ւ թըռչուն,

Արեւն է ինձ պէտ արխուր այս իրեկուն,

Իր երկներին մէջ ան չունի՞ ըյոյ, զանձեր

Որ ամենուն սպանե կը ընան թափանցել.

Հափիւայտ իր երկներին մէջ անի?

Աստղեր, շողեր, զեփիւ. կապոյտ ալ ըսնի?»

Ու պատահին տրաւ թըռչուն ինձի.

«Թէ, նախատե՞ղ զծ, ուզիդ ըլլար նուով էի,

Արգակի նըմնան, և ի՞ց պէտք արցայ:

Դանայիիր, ասի կ'ուսենակի գին, հաւասա,

Մարգիկ՝ իւեղնուկ տան մէջ ինչպէս պաւատին՝

Հոգերոս տեղ ազօտ հըրազ մը ունին.

Եւ ինձն թա՞ն պարզեն, լաց սակայն

կը նայ նըւաս մը մեղմացնել երիկուան.

Բայց սսկեղէն սատղը կապոյտ կամարին.

Չուն յարգող շրեշակ, չունի՞ մըտերիմ.

Չունի զւարթ իր եւթին՝ այս մ'որ երդէ.

Իր բայլերուն առաջորդէ մ'աւ զորկ է.

Քաջըրէկ ամարյօ մ'երեկք չեկան ըսթուանին,

Ու եր շաման հովոյն մարէ զայրոյթն գին:

Աւս թէ ի՞նչն է պատճառ ամբարթներան,

Ու թէ ի՞նչո՞ւ տըխոր է այսպէս իրկուան»:

Alix Mousseé

թարգմ. Հ. Դ. Բ.